# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան
(Կնքման վայրը)

«08» սեպտեմբերի 2020թ.

«28» փետրվարի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման NԲԸԱՀԾՁԲ-10-15-1 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս ՆՏԱԳՎ պետ Ն. Յոլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով **«Կողմեր»**, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ **«Կողմ»**, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի** 6-րդ հավելվածին կից ցանկից («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներ) հանել ստորև նշված բաժանորդական քարտը.

| հ/հ | ID | Քարտի համարը | Բաժանորդի անվանումը | Մատակարարման (էլ.ցանցի) անվանումը |
|---|---|---|---|---|
| 1 | 10268047 | 7006016 | 28418 | «Գեղամա» մ/ճ «Վարդենիս» էլ.ցանց |

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2020թ. փետրվարի 1-ից, **Կողմերի** միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Սույն համաձայնագիրը հանդիսանում է **Պայմանագրի** անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր **Կողմի** համար:

**Կողմերի հասցեներն ու ստորագրությունները**

**Մատակարար՝**
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 127

Լիազորված անձ՝

Դ. Ղազինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

**Սպառող՝**
ՀՀ Պաշտպանության նախարարություն

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Բագրևանդի 5

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ պետ՝

Ն. Յոլյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.